

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԽԱՂԱՐԿՎՈՂ ԱՄՆ ՆԵՐԳԱՂԹԻ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ (DV-2020)

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԱՄՆ Պետքարտուղարությունն ամեն տարի Ներգաղթի և քաղաքացիության մասին ԱՄՆ օրենքի 203(գ) հոդվածի համաձայն իրականացնում է ներգաղթային վիզաների վիճակախաղ, որը նախատեսված է ԱՄՆ ներգաղթի ցածր ցուցանիշներ ունեցող երկրների քաղաքացիների համար: 2020 ֆինանսաբյուջետային տարվա համար նախատեսվում է շնորհել ներգաղթի կամ մշտական բնակության 50.000 վիզա: Այս վիճակախաղին մասնակցելու համար որևէ վճարում չի պահանջվում:

Մշտական բնակության վիզա ստանալու համար վիճակախաղում շահած անձինք (շահողները) պետք է բավարարեն մի շարք պարզ ու հստակ չափանիշների: Շահողները որոշվում են համակարգչային պատահական ընտրանքի միջոցով, և նրանք իրավունք են ստանում ներգաղթային վիզայի դիմում ներկայացնել: ԱՄՆ պետքարտուղարությունն այս վիզաները տեղաբաշխում է վեց աշխարհագրական տարածքներում, ընդ որում որևէ երկիր իրավասու չէ ստանալ տվյալ տարվա համար խաղարկվող վիզաների 7 տոկոսից ավելին:

Հետևյալ երկրների քաղաքացիները 2020թ. խաղարկությանը չեն կարող մասնակցել, քանի որ վերջին 5 տարիների ընթացքում այդ երկրներից ԱՄՆ ներգաղթողների թիվը գերազանցել է 50.000-ը:

**ԲԱՆԳԼԱԴԵՇ, ԲՐԱԶԻԼԻԱ, ԿԱՆԱԴԱ, ՉԻՆԱՍՏԱՆ (ցամաքային), ԿՈԼՈՒՄԲԻԱ, ԴՈՄԻՆԻԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԼ ՍԱԼՎԱԴՈՐ, ՀԱՅԻԹԻ, ՀՆԴԿԱՍՏԱՆ, ՅԱՄԱՅԿԱ, ՄԵՔՍԻԿԱ,
ՆԻԳԵՐԻԱ, ՊԱԿԻՍՏԱՆ, ՊԵՐՈՒ, ՖԻԼԻՊԻՆՆԵՐ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (բացի
Հյուսիսային Իռլանդիայից) իր հպատակ տարածքներով, ՎԻԵՏՆԱՄ:**

Հոնկոնգ և Մակաու հատուկ վարչական շրջաններում և Թայվանում ծնված մարդիկ կարող են մասնակցել ծրագրին:

Խաղարկությանը մասնակցելու իրավասու երկրների շարքում նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի եղել:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

Պահանջ 1. Վիճակախաղին կարող են մասնակցել իրավասու երկրների ցանկում ներառված երկրներում ծնված անձինք:

Եթե այդ երկրներից որևէ մեկում չեք ծնվել, այդ պայմանին բավարարելու համար կա ևս երկու տարբերակ.

- Ամուսնացած ե՞ք իրավասու երկրում ծնված անձնավորության հետ: Եթե այո, ուրեմն կարող եք վերցնել ձեր ամուսնու/կնոջ ծննդյան երկիրը, սակայն այս պարագայում հայտը պետք է անպայմանորեն ներառի ձեզ երկուսիդ և երկուսդ էլ պետք է միաժամանակ դիմեք վիզայի

համար և միաժամանակ մուտք գործեք ԱՄՆ:

- Դուք ծնվել ե՞ք մի այնպիսի երկրում, որտեղ ծնվածն այս տարի չի կարող մասնակցել ծրագրին, սակայն ձեր ծնողներից և ոչ մեկը չի ծնվել այդ երկրում կամ ձեր ծննդյան պահին չեն եղել այդ երկրի մշտական բնակիչ: Եթե այո, ապա դուք կարող եք ծնողներից մեկի ծննդավայրի հիման վրա դիմել, եթե դա այնպիսի երկիր է, որի բնիկն իրավասու է մասնակցել DV-2020 ծրագրին: Լրացուցիչ մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**

Պահանջ 2. Յուրաքանչյուր դիմող պետք է բավարարի DV ծրագրի կրթության և աշխատանքային փորձի պահանջներին՝ ունենալով դրանցից առնվազն մեկը:

- Դուք պետք է ունենաք միջնակարգ կամ համարժեք կրթություն, որը համապատասխանում է ԱՄՆ-ում դպրոցական 12-ամյա ֆորմալ կրթությանը կամ
- վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարի պետք է աշխատած լինեք մի այնպիսի մասնագիտությամբ, որի համար պահանջվում է նվազագույնը երկու տարվա ուսուցում կամ երկու տարվա աշխատանքային փորձ: Աշխատանքային փորձի համապատասխանությունը որոշելիս կօգտագործվի ԱՄՆ աշխատանքի և զբաղվածության նախարարության O*Net Online տվյալների օնլայն/առցանց բազան:

Աշխատանքային փորձի հետ կապված մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**

Եթե այս երկու պայմաններին չեք բավարարում, ապա հայտ ՉՊԵՏՔ է ներկայացնեք:

ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

DV-2020 վիճակախաղի մասնակցության հայտերը պետք է ներկայացվեն www.dvlottery.state.gov կայքում՝ էլեկտրոնային եղանակով, սկսած 2018թ. հոկտեմբերի 3-ից, չորեքշաբթի (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00-ից (Գրիվնիչ -4)) մինչև երեքշաբթի, 2018թ. նոյեմբերի 6-ը (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00 (Գրիվնիչ -5)): Գրանցումը մի թողեք վերջին շաբաթվան, քանի որ այդ օրերին մեծ պահանջարկի հետևանքով կայքի աշխատանքը կարող է դանդաղել: Թղթային և սահմանված ժամկետից հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում: Օրենքը թույլ է տալիս մասնակցության համար յուրաքանչյուր անձին գրանցվել միայն մեկ անգամ և միայն սահմանված ժամանակահատվածում: Պետքարտուղարությունը կիրառում է ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս բացահայտել ներկայացված մեկից ավելի հայտերը: **Մեկից ավելի հայտեր ներկայացնելու դեպքում, ձեր հայտը հաշվի չի առնվի:**

DV-2020 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Լրացրեք և ներկայացրեք Ներգաղթային վիզայի վիճակախաղի մասնակցության առցանց էլեկտրոնային հայտը (E-DV Entry Form կամ DS-5501) www.dvlottery.state.gov կայքում: Կիսատ լրացված հայտերը չեն ընդունվում: Վիճակախաղին մասնակցելու համար որևէ վճարում չի պահանջվում: Խնդրում ենք հայտը լրացնելիս և ներկայացնելիս օգտագործել ինտերնետ դիտարկիչների թարմ տարբերակներ, որովհետև հին դիտարկիչների, օրինակ Internet Explorer 8-ի օգտագործման դեպքում գրանցման առցանց համակարգը նորմալ չի գործում:

Խորհուրդ ենք տալիս հայտը լրացնել անձամբ՝ առանց դիմելու վիզայի խորհրդատուների կամ գործակալների կամ այլ միջնորդների, ովքեր իրենց օգնությունն են առաջարկում: Եթե ձեզ մեկ այլ

անձ օգնում է, ապա հայտը լրացնելիս դուք պետք է ներկա լինեք, որպեսզի հարցերին ճիշտ պատասխաններ տաք և հայտը ներկայացնելուց հետո վերցնեք ու պահեք հաստատման ծանուցումն ու եզակի նույնականացման համարը: Հաստատման ծանուցումն ու եզակի նույնականացման համարը պահելը շատ կարևոր է. եթե այս տեղեկությունները չունեք, ապա հետագայում չեք կարողանա մուտք գործել առցանց համակարգ՝ ստուգելու ձեր հայտի կարգավիճակը: Մինչ դրանց պահպանումը մեկ ուրիշին վստահելը, լավ մտածեք այդ մասին: Անպայման հետևեք նաև E-DV հայտի մեջ ձեր կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին: Ներգաղթային վիզայի վիճակախաղի հետ կապված խաբեությունների ու կեղծիքների մասին տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**

Դուք նաև կարող եք դիտել խաղարկվող ներգաղթային վիզաների ծրագրի մասին մեր [տեսանյութը](#), որտեղ կան քայլ-առ-քայլ հրահանգներ հայտի ներկայացման վերաբերյալ:

Հրահանգների համաձայն մասնակցության հայտը լրացնելուց հետո էկրանին կհայտնվի հայտի ստացումը հաստատող ծանուցում, որտեղ կնշվի մասնակցի անունն ու եզակի նույնականացման համարը: Սա պետք է տպել և պահել: 2019թ. մայիսի 7-ից այս նույնականացման համարի ու Ձեր անձնական տվյալների մուտքագրման միջոցով կկարողանաք www.dvlottery.state.gov կայքում ստուգել Ձեր հայտի կարգավիճակը՝ *Entrant Status Check* դաշտում: Հայտի կարգավիճակի ստուգումը միակ ուղին է, որով դուք կկարողանաք իմանալ DV-2020 վիճակախաղում շահել/չշահելու, իսկ շահելու դեպքում նաև ներգաղթային վիզայի հարցազրույցի օրվա նշանակման մասին: ԱՄՆ կառավարությունը Ձեզ հետ անմիջական կապ չի հաստատելու: Միայն *Entrant Status Check* դաշտի միջոցով դուք կստանաք հրահանգներ հետագա քայլերի մասին. տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**

Հայտում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տվյալները.

1. **Ազգանուն, անուն, հայրանուն** – գրեք ճիշտ այնպես, ինչպես գրված է Ձեր անձնագրում: Եթե ունեք միայն մեկ անուն, ապա դա պետք է գրել ազգանվան դաշտում:
2. **Սեռը** - արական կամ իգական
3. **Ծննդյան օրը** - օր, ամիս, տարի
4. **Քաղաքը/գյուղը** որտեղ ծնվել եք
5. **Երկիրը** որտեղ ծնվել եք - ընդ որում, պետք է օգտագործել ծննդյան երկրի պաշտոնական անվանումը հայտը լրացնելու պահին
6. **Երկիրը, որտեղից իրավասու եք ներկայացնել հայտ** - սովորաբար սա նույնն է, ինչ դիմողի ծննդավայր երկիրը: Պարտադիր չէ, որ դա լինի նույն երկիրը, որտեղ դուք ապրում եք կամ որի քաղաքացին դուք համոզված եք, եթե դա ձեր ծննդավայր երկիրը չէ: Եթե դուք ծնվել եք մի այնպիսի երկրում, որտեղից վիճակախաղի մասնակցության հայտեր չեն ընդունվում, ապա դիտարկեք այս հրահանգները՝ պարզելու իրավասու եք արդյոք դիմել այլ հիմունքներով: Մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**
7. **Լուսանկար(ներ)** – անհրաժեշտ են Ձեր, Ձեր ամուսնու/կնոջ ու բոլոր երեխաների թարմ (վերջին 6 ամիսների ընթացքում արված) լուսանկարներ: Լուսանկարի կոմպոզիցիոն ու տեխնիկական բնութագրի համար տես՝ **ԹՎԱՑԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ:** Եթե Ձեր ամուսինը/կինը կամ երեխան արդեն ԱՄՆ քաղաքացի են կամ ԱՄՆ մշտական օրինական բնակիչ, նրանց լուսանկարները կցելու կարիք չկա, սակայն կցելու դեպքում էլ դա որևէ խնդիր չի առաջացնի:

Ներկայացվող լուսանկարները պետք է համապատասխանեն ԱՄՆ վիզայի համար պահանջվող

լուսանկարի պահանջներին: Ձեր կամ ձեր ընտանիքի անդամների համար այնպիսի լուսանկարների ներմուծումը, որոնք լիովին չեն համապատասխանում ստորև առաջադրվող բնութագրին/պահանջներին կամ ինչ-որ կերպ այլափոխված են, կհանգեցնի հիմնական դիմողի գործի անընդունելիության, իսկ վիճակախաղում շահելուց հետո՝ գործի շրջանակում քննվող ներգաղթային վիզաների մերժման: Հայտը չի դիտարկվի, եթե հայտին կցվի այն նույն լուսանկարը, որն օգտագործվել է նախորդ տարվա խաղարկությանը մասնակցելու համար: Մանրամասների համար տես՝ **ԹՎԱՑԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ:**

8. Փոստային հասցեն – ում, հասցեի առաջին տող, հասցեի երկրորդ տող, քաղաք/գյուղ, երկիր

9. Ընթացիկ բնակության երկիր

10. Հեռախոսահամար - ըստ հայեցողության

11. Էլեկտրոնային փոստի (e-mail) հասցե - նշեք էլեկտրոնային փոստի այնպիսի հասցե, որից դուք ուղղակիորեն օգտվում եք և որը ձեզ համար հասանելի կլինի հաջորդ տարի մայիսից հետո, երբ շահողները հայտնի կլինեն: Եթե դուք շահել եք և *Entrant Status Check*-ի կամ Հայտի կարգավիճակի ստուգման ժամանակ ստացել եք շահելու մասին ծանուցում և պատասխանել եք դրան, ապա այս հասցեով Պետքարտուղարությունը Ձեզ կտեղեկացնի, թե երբ կարող եք կրկին կատարել Հայտի կարգավիճակի ստուգում, որպեսզի իմանաք ներգաղթային վիզայի հարցազրույցի հետ կապված մանրամասները: ԱՄՆ պետքարտուղարությունը կարող է այս հասցեով Ձեզ գրություններ ուղարկել, սակայն DV ծրագրում շահելու մասին ծանուցումը ոչ մի դեպքում Ձեզ էլ. փոստով չի ուղարկվի: Ընտրության հետ կապված մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**

12. Կրթությունը - ձեր ստացած ամենաբարձր կրթությունն այս պահի դրությամբ (1) հիմնական կրթություն, (2) որոշակի միջնակարգ/ավագ դպրոցի կրթություն, առանց ավարտական վկայականի, (3) միջնակարգ/ավագ դպրոց, ավարտական վկայականով (4) արհեստագործական կրթություն, (5) որոշ բուհական դասընթացներ, (6) բուհական կրթություն (7) բակալավրի մակարդակի որոշ դասընթացներ, (8) մագիստրոսի կոչում, (9) թեկնածուական մակարդակի որոշ դասընթացներ, (10) թեկնածուական կոչում: Կրթական պահանջների հետ կապված մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ:**

13. Ընթացիկ ամուսնական կարգավիճակ – (1) չամուսնացած, (2) ամուսնացած և իմ ամուսինը/կինն ԱՄՆ քաղաքացի կամ մշտական օրինական բնակիչ ՉԷ, (3) ամուսնացած և իմ ամուսինը/կինն ԱՄՆ քաղաքացի կամ մշտական օրինական բնակիչ Է, (4) ամուսնալուծված, (5) այրի, (6) օրինականորեն բաժանված: Լրացրեք Ձեր ամուսնու/կնոջ անուն-ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, թիվը, սեռը, ծննդյան վայրը (գյուղ/քաղաք, երկիր) և ներբեռները լուսանկար՝ նույն կոմպոզիցիոն ու տեխնիկական բնութագրով, ինչ ձեր նկարն է:

Եթե հայտում դուք չեք նշում Ձեր կնոջ/ամուսնուն կամ նշում եք մեկին ով ձեր կինը/ամուսինը չէ, ապա դա կհանգեցնի հիմնական դիմողի գործի անընդունելիության և հետագայում կհանգեցնի գործով պահանջվող ներգաղթի վիզաների մերժման: Դուք այստեղ պետք է նշեք Ձեր կնոջ/ամուսնուն, եթե անգամ առանձին եք ապրում, եթե խոսքն օրինականորեն բաժանված լինելու մասին չէ (օրինական բաժանված լինելը դա այն իրավիճակն է, երբ գույքը գտնվում է ամուսնական կարգավիճակում, սակայն դատարանի որոշմամբ նրանք ապրում են առանձին): Եթե դուք ձեր կնոջից/ամուսնուց օրինականորեն բաժանված եք, ապա ձեր կինը/ամուսինն իրավասու չէ ձեզ հետ ներգաղթել Միացյալ Նահանգներ: Եթե հայտում ներառում եք ձեր կնոջ/ամուսնուն, ումից օրինականորեն բաժանված եք, դա որևէ խնդիր չի առաջացնի: Եթե օրինականորեն բաժանված չեք, ապա պետք է անպայման նշեք ձեր կնոջ/ամուսնուն, նույնիսկ եթե պլանավորում եք մինչ

ներգադրի վիզայի հայտ ներկայացնելն ամուսնավուծվել նրանից: Կնոջը/ամուսնուն չնշելը կարող է հայտը դարձնել անընդունելի:

Եթե ձեր կինը/ամուսինն ԱՄՆ քաղաքացի է կամ ԱՄՆ մշտական օրինական բնակիչ, ապա նրան մի ներառեք Ձեր հայտում: Նրան ներգադրի վիզա պետք չէ: Եթե որպես կարգավիճակ ընտրում եք «ամուսնացած և իմ ամուսինը/կինն ԱՄՆ քաղաքացի կամ մշտական օրինական բնակիչ է» տարբերակը, ապա հայտում ամուսնու/կնոջ վերաբերյալ հավելյալ հարցեր այլևս չեն լինի: Ընտանիքի անդամների հետ կապված մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ**:

14. **Երեխաների թիվը** - հայտում լրացեք 21 տարին չլրացած, չամուսնացած ու ողջ բոլոր երեխաների անուն-ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, թիվը, սեռը, ծննդյան վայրը (գյուղ/քաղաք, երկիր)՝ անկախ այն հանգամանքից նրանք ձեզ հետ ապրում են թե, ոչ կամ մտադիր են ձեզ հետ ներգադրել ԱՄՆ, թե ոչ: Ամեն երեխայի համար կցեք առանձին լուսանկար՝ նույն կոմպոզիցիոն և տեխնիկական բնութագրով, ինչպես ձեր լուսանկարը:

Անպայմանորեն ներառեք.

- Բոլոր ողջ կենսաբանական երեխաներին
- Օրինականորեն ձեր կողմից որդեգրված բոլոր ողջ երեխաներին
- Բոլոր ողջ խորթ երեխաներին, ովքեր հայտի ներկայացման օրվա դրությամբ ամուսնացած չեն ու մինչև 21 տարեկան են: Նշեք նույնիսկ այն պարագայում, եթե դուք այլևս այդ երեխաների ծնողի հետ օրինական ամուսնության մեջ չեք և անգամ եթե այդ երեխան տվյալ պահին չի բնակվում ձեզ հետ և չի պատրաստվում ներգադրել ձեզ հետ:

Ամուսնացած և 21 տարեկան ու դրանից բարձր տարիք ունեցող երեխաները չեն կարող ընդգրկվել ծրագրում, սակայն որոշ հանգամանքների առկայության դեպքում ԱՄՆ օրենսդրությունը պաշտպանում է երեխաներին «տարիքի պատճառով դուրս մնալուց»: Եթե վիճակախաղի հայտը ներկայացնելիս Ձեր երեխայի 21 տարին դեռ չէր լրացել, սակայն ներգադրի վիզայի համար դիմելու ժամանակ արդեն լրացել է երեխայի 21 տարին, ապա Երեխայի կարգավիճակի պաշտպանության մասին օրենքով երեխան կարող է դուրս չմնալ և ներգադրի վիզայի հետ կապված հարցերում դիտարկվել որպես 21 տարին չլրացած երեխա:

Արդեն իսկ ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ մշտական օրինական բնակիչ հանդիսացող երեխայի համար ներգադրի վիզայի անհրաժեշտություն չկա, ուստի ձեր հայտում ընտանիքի նման անդամներին ներառելը կամ չներառելը ձեզ համար խնդիրներ չի առաջացնի:

Եթե հայտում դուք Ձեր բոլոր երեխաներին չեք թվարկում, ապա դա հետագայում կհանգեցնի վիզայի մերժմանը հիմնական դիմողի և ընտանիքի մյուս անդամների համար: Ընտանիքի անդամների հետ կապված մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ**:

DV-2020-ի էլեկտրոնային հայտի լրացման հետ կապված լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ**:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի տարածաշրջանի և երկրի համար սահմանված տեղերի հիման վրա ներկայացված բոլոր հայտերից ԱՄՆ պետքարտուղարությունը համակարգչային եղանակով պատահականորեն ընտրում է այն դիմողներին, ովքեր կարող են դիմել ներգադրային վիզայի համար: DV-2020 վիճակախաղի բոլոր

մասնակիցները պետք է մուտք գործեն վիճակախաղի կայքը, որպեսզի պարզեն իրենց հայտի կարգավիճակը կամ այլ կերպ ասած պարզեն արդյոք շահել են, թե ոչ: Շահողներն իրենց շահման մասին կարող են տեղեկանալ սկսած 2019թ. մայիսի 7-ից առնվազն մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը՝ այցելելով www.dvlottery.state.gov կայքը և ստուգելով իրենց հայտի կարգավիճակը (Entry Status Check):

Ապա՝ շահող մասնակիցները կայքում կուղղորդվեն դեպի հաստատման էջը, որտեղ կլինեն հրահանգներ հետագա քայլերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ ԱՄՆ ներգաղթի գործընթացի հետ կապված միջնորդավճարների վերաբերյալ: Հայտի կարգավիճակի ստուգումը (Entry Status Check) կայքում DV-2020 վիճակախաղում շահելու մասին շահողներին տեղեկացնելու ՄԻԱԿ ուղին է: Պետքարտուղարությունը փոստով շահման մասին ծանուցող նամակներ չի ուղարկի: Վիճակախաղում շահողները շահման մասին ծանուցում էլեկտրոնային փոստով ՉԵՆ ՄՏԱՆԱ: Ուժեր չեն շահել, նույնպես այդ մասին կտեղեկանան կայքում՝ միմիայն Հայտի կարգավիճակը ստուգելով: ԱՄՆ դեսպանատներում և հյուպատոսական ծառայություններում շահողների ցուցակներ չեն լինելու: Խորհուրդ ենք տալիս, որ ուրիշներին խնդրելու փոխարեն դուք ինքներդ մուտք գործեք կայք և ստուգեք ձեր հայտի կարգավիճակը:

ԱՄՆ ներգաղթելու համար անհրաժեշտ է, որ վիճակախաղը շահած անձինք համապատասխանեն ԱՄՆ օրենքներով նախատեսվող բոլոր պայմաններին: Անհրաժեշտ է առցանց լրացնել և ներկայացնել Ներգաղթային վիզայի և օտարերկրյա քաղաքացու գրանցման հայտի DS-260 ձևը, ապա հարցազրույց անցնել հյուպատոսական պաշտոնյայի մոտ՝ պատասխանելով ԱՄՆ ներգաղթելու հետ կապված օրենսդրական պահանջների ապահովման հետ կապված հարցերի: Այս հարցերի շարքում կան քրեական ու անվտանգության թեմաներին առնչվող հարցեր:

Շահած դիմողներին և նրանց ընտանիքների անդամներին վիզաների տրամադրումը ՊԵՏՔ է ավարտված լինի 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ: Ոչ մի դեպքում այս վիզաները չեն կարող տրվել կամ փոփոխվել այս ժամկետից հետո, իսկ ընտանիքի այն անդամները, ովքեր չեն ստացել վիզաներ մինչ այդ ժամկետը, այլևս չեն կարող միանալ ընտանիքի հիմնական շահող անդամին ԱՄՆ-ում: Ընտրության հետ կապված մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ**:

ԹՎԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Թվային լուսանկարը կարելի է ստանալ հետևյալ եղանակներով. կամ լուսանկարվել թվային լուսանկարչական ապարատով, կամ սովորական լուսանկարի (արված վերջին 6 ամիսների ընթացքում) տեսաներածում կատարել՝ թվային տեսաներածիչի (սքաների) միջոցով: Հայտին կցվող լուսանկարը պետք է համապատասխանի որակական ու բնութագրային այն պահանջներին, որոնք առաջադրվում են ԱՄՆ մուտքի վիզաների լուսանկարներին: Ընդունելի լուսանկարների նմուշներ կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ <https://travel.state.gov/content/travel/en/us-visas/visa-information-resources/photos/photo-examples.html>: Մի ներկայացրեք այնպիսի լուսանկար, որը 6 ամսից ավել վաղեմություն ունի կամ չի համապատասխանում նշվող պահանջներից որևէ մեկին: Եթե կցվում է նախորդ տարվա խաղարկության համար օգտագործած լուսանկարը, կամ այլափոխված լուսանկար, ապա դա կարող է հանգեցնել հայտի անընդունելիության:

Ձեր լուսանկարը կամ թվային պատկերը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- Լինի գունավոր:
- Ֆոկուսից դուրս չլինի:

- Պատկերում գլխի չափը՝ դնչի ծայրից մինչև գլխի ծայրը պետք է լինի 1-ից 1.4 դյույմի (22 մմ-ից 35 մմ-ի) սահմաններում կամ զբաղեցնի ընդհանուր պատկերի 50%-ից and 69%-ը: Տես լուսանկարի [լումպոզիցիոն բնութագրի մանրամասներն այստեղ](#):
- Լուսանկարը պետք է վերջին 6 ամսվա ընթացքում արված լինի, որպեսզի ձեր ներկա արտաքինը ցույց տա:
- Ֆոնը պետք է լինի միատոն՝ սպիտակ կամ սպիտակավուն:
- Լուսանկարվողը պետք է նայի ուղիղ ֆոտոխցիկին:
- Դեմքի արտահայտությունը պետք է լինի չեզոք, երկու աչքերը բաց:
- Լուսանկարվողը պետք է լինի առօրյա հագուստով, որը սովորաբար կրում է:
- Չի կարելի նկարվել համազգեստով, բացառություն կարող է համարվել միայն առօրյա կրոնական հագուստը:
- Չի կարելի կրել գլխարկ կամ գլխանոց, որ փակում է մազերն ու մազերի գիծը, եթե դա կրոնական առօրյա հագուստի տարր չի համարվում: Դեմքն ամբողջությամբ պետք է բաց լինի և գլխանոցը որևէ սովոր չպետք է գցի դեմքին:
- Լուսանկարում չեն կարող լինել ականջակալներ կամ այլ նմանօրինակ բաներ:
- Եթե դուք լսողական սարք եք կրում կամ նմանատիպ որևէ այլ բան, ապա լուսանկարվելիս դրանք կարող եք չհանել:

Դիտարկեք [Լուսանկարների օրինակները](#), որտեղ կարող եք տեսնել, թե որ լուսանկարներն են ընդունելի և որոնք՝ ոչ: Վարորդական վկայականի կամ այլ պաշտոնական փաստաթղթի պատճենված կամ սքանավորված լուսանկարը չի ընդունվում: Բացի այդ, էկրանից պատճենված, ամսագրերից վերցված, բջջային հեռախոսներով արված ոչ որակյալ լուսանկարները կամ ամբողջ հասակով լուսանկարները չեն ընդունվում:

Դուք հայտը լրացնելիս պետք է ներբեռնեք Ձեր լուսանկարը/լուսանկարները: Ներբեռնվող թվային լուսանկարի տեխնիկական բնութագիրը հետևյալն է.

Պատկերի ֆայլի ֆորմատը՝	JPEG
Պատկերի ֆայլի չափը՝	առավելագույնը 240 կիլոբայթ
Պատկերի ռեզոլյուցիան՝	600x600 պիքսել, նկարի կողմերը հավասարաչափ (լայնությունը և երկարությունը հավասար)

Ուզում ե՞ք սքանավորել/տեսաներածել գոյություն ունեցող որևէ լուսանկար: Ուրեմն վերը նշված տեխնիկական բնութագրից զատ պետք է հաշվի առնեք նաև հետևյալը.

- Պետք է լինի 2դյույմx2դյույմ կամ 51մմx51մմ չափսի լուսանկար:
- Սքանավորումը պետք է կատարվի 1 դյույմը 300 պիքսել կամ 1 մմ-ը 12 պիքսել ռեզոլյուցիայով:

Պետքարտուղարության այս [անվճար ֆոտոգործիքի](#) միջոցով կկարողանաք.

- ընտրել լուսանկար ձեր համակարգչում առկա լուսանկարներից.
- փոխել լուսանկարի չափսերն ու շրջել այն, եթե անհրաժեշտ է,
- լուսանկարը կտրել ու դարձնել 600 x 600 պիքսել ռեզոլյուցիայի պատկեր:

ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ

1. ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԲՆԻԿ» ԵՎ «ՎԵՐԱԳՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ»:

«Բնիկը» սովորաբար այն անձնավորությունն է, ով ծնվել է տվյալ երկրում, անկախ այն հանգամանքից, թե ներկայումս այդ անձնավորությունը բնակվում է այդ երկրում կամ այդ երկրի քաղաքացի է, թե ոչ: Ներգաղթի համատեքստում «բնիկ» հասկացությունը կարող է նաև վերաբերել այն անձնավորությանը, որն ըստ Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 202(բ) կետի կարող է վերագրվել մի երկրի, որտեղ ինքը չի ծնվել:

Քանի որ յուրաքանչյուր երկրից ու մայրցամաքից կա ներգաղթողների թվի սահմանաչափ, ուստի ամեն մի դիմող վերագրվում է որևէ երկրի: Ձեր վերագրելիությունն այն է, թե որ երկրի սահմանաչափում եք հաշվառվում դուք: Այն երկիրը, որից Դուք իրավասու եք դիմել համարվում է ձեր ծննդավայրը՝ երկիրը, որտեղ դուք ծնվել եք: Սակայն, կարող եք իրավասու երկիրն ընտրել նաև ձեր ամուսնու կամ ծնողներից որևէ մեկի ծննդավայրի հիման վրա, եթե դուք ծնվել եք մի երկրում, որը ձեր ծնողներից ոչ մեկի ծննդավայրը չէ կամ էլ մի այնպիսի երկրում, որտեղ ձեր ծնողները ձեր ծնվելու պահին չեն բնակվել: Սրանք են այն երեք հնարավոր ճանապարհները, որով Դուք կարող եք ընտրել ձեր վերագրելիության երկիրը:

Ոչ ճիշտ վերագրելիության երկիր ընտրելը, որի նկատմամբ չեք կարողանա հաստատել Ձեր փաստացի վերագրելիությունը՝ կհանգեցնի ձեր հայտի անընդունելիությանը:

2. ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԴԻՄԵԼ ԵԹԵ ՉԵՄ ԾՆՎԵԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՈՒՄ:

Երկու հանգամանքների առկայության պարագայում դուք կարող եք իրավասու լինել դիմել: Առաջին, եթե ամուսնացած եք մի անձնավորության հետ, ով ծնվել է ծրագրին մասնակցելու իրավասու երկրում: Քանի որ դիմողի մասնակցության իրավասությունը պայմանավորված է ամուսնու/կնոջ երկրով, անհրաժեշտ է, որ դիմողի ամուսինը/կինը նույնպես համապատասխանի առաջադրվող պահանջներին և վիճակախաղում շահելու դեպքում երկուսը միասին պետք է դիմեն վիզայի համար (DV-1 և DV-2) և ԱՄՆ պետք է մուտք գործեն միաժամանակ: Նույն կերպ, ծնողների ծննդավայրը կարող է «վերագրվել» անչափահաս երեխային:

Երկրորդ, կարող եք դիմել ձեր ծնողներից մեկի ծննդավայրի հիման վրա, եթե դուք ծնվել եք մի այնպիսի երկրում, որը ձեր ծնողներից ոչ մեկի ծննդավայրը չէ և ձեր ծնողներից ոչ մեկը ձեր ծնվելու պահին չի եղել տվյալ երկրի բնակիչ: Ընդհանուր առմամբ, մարդիկ չեն համարվում տվյալ երկրի բնակիչ, եթե նրանք չեն ծնվել այդ երկրում կամ ձեռք չեն բերել այդ երկրի քաղաքացիություն: Ժամանակավոր այցով երկրում գտնվող կամ որևէ կազմակերպության կամ կառավարության անունից գործնական և մասնագիտական հարցերով ժամանակավորապես այդ երկրում բնակվող մարդիկ չեն համարվում բնակիչ:

Այն մասնակիցը, որը դիմում է «վերագրելիության» հիմքով, պետք է անպայմանորեն հայտի 6-րդ կետում արտացոլի այս փաստը: Հիշեք, **մասնակցության իրավասության** կամ **վերագրելիության** սխալ երկիր նշելու դեպքում ձեր հայտն անընդունելի կհամարվի:

3. ԻՆՉՈ՞Ւ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆԻԿՆԵՐ ԻՐԱՎԱՍՈՒ ԳԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԾՐԱԳՐԻՆ:

Այս ծրագրի շրջանակներում վիզայի ստացման հնարավորություն է տրվում այն երկրներին, որտեղից ԱՄՆ ներգաղթողները մեծ թիվ չեն կազմում: Օրենքով սահմանվում է, որ ներգաղթի բարձր ցուցանիշներ ունեցող երկրները չեն կարող մասնակցել այս ծրագրին. սա մասնավորապես վերաբերում է այն երկրներին, որտեղից ընտանիքի հովանավորության և աշխատանքային առաջարկների վրա հիմնված վիզաներով ԱՄՆ ներգաղթած

անձանց թիվը վերջին 5 տարիների ընթացքում գերազանցել է 50.000 հոգին: Ամեն տարի ԱՄՆ ներգաղթի և հպատակագրման ծառայությունները հաշվառում են վերը նշված կատեգորիաների վիզաներով ներգաղթողներին և այդ ցուցանիշների հիման վրա որոշում, թե որ երկրների բնակիչները չեն կարող մասնակցել այս ծրագրին: Սա կատարվում է ամեն տարի, ուստի մասնակցելու իրավունք չունեցող երկրների ցուցակն ամեն տարի ենթակա է փոփոխման:

4. ՔԱՆԻ՞ՎԻԶԱ ԿՇՆՈՐՀՎԻ ԱՄԵՆ ՄԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐԻՆ՝ DV-2020-Ի ՇՐՁԱՆԱԿՈՒՄ:

ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայություններն ամեն տարի Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 203(գ) կետով սահմանված հատուկ բանաձևով հաշվարկում են այս տեսակի վիզաների առավելագույն քանակությունը՝ ըստ տարածաշրջանների: Ամեն մի երկրում ի վերջո ԱՄՆ պետքարտուղարության կողմից տրված վիզաների թիվը կախված կլինի տվյալ տարածաշրջանի սահմանաչափից, ամեն երկրից հայտ ներկայացրածների թվից և նրանից, թե վիճակախաղում շահելուց հետո ովքեր իրավասու լինեն ստանալ ներգաղթային վիզա: Որևէ մեկ երկիր իրավասու չէ ստանալ ընդհանուր վիզաների 7 տոկոսից ավելը:

5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԻՆՉՊԱՀԱՆՋՆԵՐԵՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ:

Օրենքն ու կանոնակարգերը պահանջում են, որ մասնակիցներն ունենան առնվազն միջնակարգ, կամ դրան համարժեք կրթություն, կամ վերջին 5 տարիների ընթացքում առնվազն երկու տարի մի այնպիսի աշխատանք կատարած լինեն, որի համար պահանջվում է երկու տարվա ուսուցում, կամ երկու տարվա աշխատանքային փորձ: Միջնակարգ կրթությունը սահմանվում է, որպես ԱՄՆ 12-ամյա տարրական և միջնակարգ կրթություն, կամ դրան համարժեք կրթություն այլ երկրի հանրակրթական ծրագրով: Այս պահանջին բավարարելու համար անհրաժեշտ է կրթություն հանրակրթական ծրագրով. հետակա ծրագրերը կամ համապատասխանության վկայականները (օրինակ՝ G.E.D.) ընդունելի չեն: Կրթությունն ու աշխատանքային փորձը հաստատող փաստաթղթեր վիճակախաղի մասնակցության հայտի հետ ներկայացնել պետք չէ. դրանք անհրաժեշտ է ներկայացնել հյուպատոսական պաշտոնյային, շահելու դեպքում վիզայի հարցազրույց անցնելու ժամանակ:

Եթե դուք չեք համապատասխանում կրթության և աշխատանքային փորձի պահանջներին, ձեր հայտը կարող է անընդունելի համարվել վիզայի հարցազրույցի ժամանակ, և ձեզ և ձեր ընտանիքի անդամներին վիզաներ չեն տրամադրվի:

6. Ո՞Ր ՄԱՍՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄԱՆՈՒՄ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

Աշխատանքային փորձի համապատասխանությունը որոշելիս ԱՄՆ պետքարտուղարությունը կօգտագործի ԱՄՆ աշխատանքի և զբաղվածության նախարարության տվյալների օնլայն/առցանց բազան: Աշխատանքի նախարարության [O*Net Online](#) տվյալների օնլայն/առցանց բազան աշխատանքային փորձը դասակարգում է 5 աշխատանքային գոտիներով: Չնայած այս տվյալների բազայում թվարկված են բազմաթիվ մասնագիտություններ, դրանցից բոլորը չէ, որ համապատասխանում են վիճակախաղի պահանջներին: Վիճակախաղին ձեր ունեցած աշխատանքային փորձի հիման վրա մասնակցելու համար, դուք վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 2 տարի պետք է աշխատած լինեք այնպիսի աշխատանքային ոլորտներում, որոնք դասակարգված են հատուկ մասնագիտական ուսուցման 7.0 կարգում, կամ ավելի բարձր:

Եթե դուք չեք համապատասխանում կրթության և աշխատանքային փորձի պահանջներին, ձեր հայտը կարող է անընդունելի համարվել վիզայի հարցազրույցի ժամանակ և ձեզ և ձեր ընտանիքի անդամներին վիզաներ չեն տրամադրվի:

7. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՏՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԱՆՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ [O*Net Online](#) ԿԱՅՔՈՒՄ:

[O*Net Online](#) կայքում հետևեք այս քայլերին պարզելու՝ արդյոք Ձեր մասնագիտությունը համապատասխանում է պահանջներին:

1. Ընտրեք "Find Occupations"/գտեք մասնագիտություններ/ կոճակը, ապա ընտրեք որոշակի "Job Family"/աշխատանքի կատեգորիա/,
2. "Job Family"/աշխատանքի կատեգորիա/ ներքո ընտրեք մասնագիտությունը, ապա սեղմեք GO կոճակը,
3. Սեղմեք ձեր մասնագիտության հղումը:
4. Բացեք "Job Zone"-ը՝ պարզելու այդ գոտու համարն ու հատուկ մասնագիտական ուսուցման դասը:

Օրինակ. Ընտրեք "հրթիռային ճարտարագետ" մասնագիտությունը: Ներքևում "հրթիռային ճարտարագետի" մասին ամփոփիչ տեղեկանքում "Job Zone"-ի տակ կտեսնեք, որ այն համարվում է 4-րդ գոտու մասնագիտական ուսուցման 7.0-ից < 8.0 միջակայքի մասնագիտություն: Օգտագործելով այս օրինակը տեսնում ենք, որ "հրթիռային ճարտարագետը" համապատասխանող մասնագիտություն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ [Բազմազանության վիզա - մասնագիտությունների ցանկ](#):

8. ԿԱ ԱՐԴՅՈ՞Ք ԾՐԱԳՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԱՐԻՔ:

Ծրագրին դիմելու համար նվազագույն տարիք չի սահմանված, սակայն հաշվի առնելով միջնակարգ կրթության կամ աշխատանքային փորձի պահանջը, կարելի է եզրակացնել, որ 18-ից ցածր տարիք ունեցող դիմողները հիմնականում չեն համապատասխանի այդ պահանջներին:

ԱՌՑԱՆՑ ՀԱՅՏԻ ԼՐԱՑՈՒՄԸ

9. Ե՞ՐԲ ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ:

DV-2020-ի համար հայտերն ընդունվում են **2018թ. հոկտեմբերի 3-ից, չորեքշաբթի (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00-ից (Գրիվնիչ -4)) մինչև 2018թ. նոյեմբերի 6-ը, երեքշաբթի (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00 (Գրիվնիչ -5))**: Ամեն տարի միլիոնավոր մարդիկ են դիմում: Գրանցումը միայն այս ժամանակահատվածում անցկացնելը թույլ է տալիս, որ մասնակիցները ժամանակին տեղեկանան շահելու մասին, և թե՛ նրանք, թե՛ մեր հյուպատոսական ծառայությունները ժամանակ ունենան պատրաստել և ընթացք տալ վիզայի դիմումներին:

Մասնակիցներին խորհուրդ ենք տալիս գրանցումը չթողնել վերջին օրերին, քանի որ մեծ պահանջարկի պատճառով հնարավոր է, որ այդ օրերին համակարգը դանդաղ աշխատի: Հայտերի ընդունումը դադարեցվում է 2018թ. նոյեմբերի 6-ին կեսօրին՝ **ստանդարտ արևելյան ժամանակով**:

10. ԵԹԵ ԵՄ ԳՏՆՎՈՒՄ ԵՄ ԱՄՆ-ՈՒՄ, ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԴԻՄԵԼ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ:

Մասնակիցը կարող է լինել ԱՄՆ-ում կամ ցանկացած այլ երկրում, և բոլորովին նշանակություն չունի, թե որտեղից է հայտը ներկայացվում:

11. ԿԱՐՈՂ ԵՄ ԵՄ ԱՐԴՅՈ՞Ք ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ:

Ոչ, քանի որ օրենքով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է ներկայացնել միայն մեկ հայտ: ԱՄՆ պետքարտուղարությունն օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս հայտնաբերել կրկնվող հայտերը: **Մեկից ավելի հայտ ներկայացրած անձինք զրկվում են խաղարկությանը մասնակցելու իրավունքից:**

12. ԿԻՆԸ ԵՎ ԱՄՈՒՄԻՆԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԴԻՄԵԼ:

Այո, կարող են, եթե նրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է առաջադրված չափանիշներին: Եթե նրանցից մեկն ընտրվի, ապա մյուսը կարող է ստանալ ածանցյալ կարգավիճակ:

13. ԸՆՏԱՆԻՔԻ Ո՞Ր ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ՆՇԵԼ ՀԱՅՏԻ ՄԵՁ:

Ամուսին/կին. Եթե գրանցված ամուսնության մեջ եք գտնվում, ապա անհրաժեշտ է նշել ամուսնուն/կնոջն անկախ այն հանգամանքից նա ապրում է ձեզ հետ, թե ոչ կամ մտադիր է ձեզ հետ ներգաղթել ԱՄՆ, թե ոչ: Ձեր ամուսնուն/կնոջը պետք է նշեք նույնիսկ այն դեպքում, եթե միմյանցից առանձին եք ապրում: Չեք նշում միայն այն դեպքում, երբ օրինականորեն եք բաժանված: Օրինական բաժանված լինելը դա այն իրավիճակն է, երբ գույզը գտնվում է ամուսնական կարգավիճակում, սակայն դատարանի որոշմամբ նրանք ապրում են առանձին: Եթե դուք ձեր կնոջից/ամուսնուց օրինականորեն բաժանված եք, ապա ձեր կինը/ամուսինն իրավասու չէ ձեզ հետ ներգաղթել Միացյալ Նահանգներ: Եթե հայտում ներառում եք ձեր կնոջը/ամուսնուն, ումից օրինականորեն բաժանված եք, դա որևէ խնդիր չի առաջացնի: Եթե օրինականորեն բաժանված չեք, ապա պետք է անպայման նշեք ձեր կնոջը/ամուսնուն, նույնիսկ եթե պլանավորում եք մինչ ներգաղթի վիզայի դիմում ներկայացնելն ամուսնալուծվել նրանից: Կնոջը/ամուսնուն չնշելը կարող է հայտը դարձնել անընդունելի: Եթե հայտը ներկայացնելիս ամուսնացած չեք, բայց ունեք առաջիկայում ամուսնանալու պլաններ, պետք չէ հայտում ներառել կին/ամուսին. դա կարող է հանգեցնել հայտի անընդունելիության: Եթե ամուսնալուծված եք կամ ձեր ամուսինը/կինը մահացել է, ապա նրան հայտում նշելու կարիք չկա:

Եթե ձեր կինը/ամուսինն ԱՄՆ քաղաքացի է կամ ԱՄՆ մշտական օրինական բնակիչ, ապա նրան մի ներառեք Ձեր հայտում: ԱՄՆ քաղաքացի կամ օրինական բնակիչ ամուսնու/կնոջ համար վիզա ստանալու անհրաժեշտություն չկա, ուստի եթե նշում եք «ամուսնացած եմ ԱՄՆ քաղաքացի/մշտական բնակիչ հանդիսացող անձի հետ». ապա հայտում ամուսնու/կնոջ մասին հետագա տվյալներ լրացնելու դաշտեր չեն բացվի:

Երեխաներ. Հայտի մեջ պետք է անպայման նշվեն ձեր բոլոր մինչև 21 տարեկան չամուսնացած ողջ երեխաները՝ կենսաբանական երեխաներ, խորթ երեխաներ (նույնիսկ եթե այս պահին այդ երեխայի ծնողի հետ ամուսնալուծված եք), ամուսնու/կնոջ երեխաներ կամ գործող օրենքների համաձայն որդեգրված երեխաներ: Հայտում նշեք հայտը լրացնելու պահին 21 տարին չլրացած բոլոր երեխաներին՝ անկախ այն հանգամանքից նրանք ապրում են ձեզ հետ, թե ոչ, կամ էլ արդյոք պատրաստվում են ձեզ հետ միասին ներգաղթել ԱՄՆ, թե ոչ: ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ-ում մշտական բնակության իրավունք ունեցող երեխաներին նշել պետք չէ, սակայն նշելու դեպքում որևէ խնդիր չի առաջանա:

Դիմողի ծնողները կամ քույրերն ու եղբայրները չեն կարող դիտարկվել որպես դիմողի խնամքի տակ գտնվող անձինք, ուստի նրանք հայտի մեջ չեն նշվում և չեն կարող ստանալ վիզա:

Այն փաստը, որ դուք հայտում նշել եք Ձեր ընտանիքի բոլոր անդամներին, չի նշանակում, որ նրանք բոլորը Ձեր հետ պետք է ներգաղթեն ԱՄՆ: Նրանք կարող են մնալ: Սակայն, եթե վիզայի համար դիմում ներկայացնելիս դուք նշում եք Ձեր խնամքի տակ գտնվող մեկին, որը նշված չէր վիճակախառի հայտի մեջ, կամ վիճակախառի հայտում որպես ձեր խնամքի տակ գտնվող անձ նշված է այնպեսի մեկը, ով չի հանդիսանում ձեր խնամքի տակ գտնվող անձ, ապա ձեր հայտն անընդունելի կհամարվի վիզայի հարցազրույցի ժամանակ, և ձեզ և ձեր ընտանիքի անդամներին վիզա չի տրամադրվի: (Սա վերաբերում է խնամքի տակ գտնվող այն անձանց, ովքեր վիճակախառին մասնակցելու հայտը ներկայացնելու պահին եղել են և ոչ նրանց, ովքեր ի հայտ են եկել դրանից հետո): Ձեր ամուսինը/կինը նույնպես կարող է վիճակախառի առանձին հայտ ներկայացնել, չնայած նա ներառված է Ձեր հայտի մեջ, սակայն երկու հայտերում էլ պետք է լինի ամբողջական տեղեկատվություն ընտանիքի անդամների վերաբերյալ (տես՝ հարց 12):

14. ԱՄԵՆ ՄԵՎՆ ԱՆՁԱՄԲ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԻՐ ՀԱՅՏԸ, ԹԵ ԻՆՉ-ՈՐ ՄԵՎՐ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԴԵՍ ԳԱԼ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՈՒՆԻՑ:

Խորհուրդ ենք տալիս, որ դուք ինքներդ պատրաստեք ու լրացնեք ձեր հայտը, սակայն ձեր փոխարեն ուրիշն էլ կարող է դա անել: Անկախ այն հանգամանքից հայտը հենց մասնակիցն է լրացրել, թե ինչ-որ մի փաստաբան, ազգական կամ ընկեր օգնել է նրան, յուրաքանչյուր մարդու անունով պետք է ներկայացվի միայն մեկ հայտ և ներկայացվող տվյալների ամբողջականության ու ճշգրտության պատասխանատուն հենց դիմողն է: Եթե տվյալները ճշգրիտ ու ամբողջական չեն, հայտը կարող է քննության չառնվել: Դիմողները պետք է պահեն մասնակցության հայտի ստացումը հաստատող ծանուցումը, որպեսզի կարողանան ինքնուրույն օնլայն/առցանց ստուգել իրենց հայտի կարգավիճակը վիճակախաղի www.dvlottery.state.gov կայքում: Դիմողները պետք է նաև մուտք ունենան դեպի այն էլեկտրոնային փոստը, որը նշել են վիճակախաղի հայտի մեջ:

15. ԱՅԼ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐՈՎ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻԶԱՅԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԱԾ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ:

Այո:

16. ԵՐԲՎԱՆԻ՞Ց Է ՀՆԱՐԱՎՈՐ ԼՐԱՑՆԵԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՑՏԵՐԸ:

Էլեկտրոնային հայտերը հնարավոր կլինի լրացնել 2018թ. հոկտեմբերի 3-ից մինչև 2018թ. նոյեմբերի 6-ը (սկիզբը և վերջը ժամը 12-ին ստանդարտ արևելյան ժամանակով):

17. ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԻՇԵԼ ԻՄ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՎՐԱ WORD ԿԱՍ ՈՐԵՎԷ ԱՅԼ \$ՈՐՄԱՏՈՎ ԵՎ ՀԵՏՈ ԼՐԱՑՆԵԼ ԱՅՆ:

Ոչ, դուք չեք կարող այն հիշել Ձեր համակարգչում և հետո լրացնել ու ուղարկել: Գրանցման ձևը գործում է միայն օնլայն/առցանց ռեժիմում: Պահանջվում է, որ ինֆորմացիան լրացնեք ու ուղարկեք օնլայն/առցանց ռեժիմում:

18. ՕՆԼԱՅՆ/ԱՌՑԱՆՑ ՀԱՅՏԻ ՄԻ ՄԱՍԸ ԼՐԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ԱՅՆ ՀԻՇԵԼ, ԻՄՎ ՄՆԱՑԱԾԸ ԼՐԱՑՆԵԼ ՀԵՏՈ:

Ոչ, չեք կարող: Հայտի ձևն այնպիսին է, որ այն պետք է միանգամից ամբողջությամբ լրացվի և ուղարկվի: Դուք ունեք 60 րոպե ժամանակ հայտը լրացնելու և ուղարկելու համար՝ հայտն առցանց ներբեռնելուց հետո: Եթե չհասցնեք լրացնել և ուղարկել հայտը 60 րոպեի ընթացքում, սպա արդեն լրացված ողջ ինֆորմացիան չեղյալ կհամարվի: Համակարգը հեռացնում է բոլոր մասնակիորեն լրացված հայտերը, որպեսզի դրանք չդիտարկվեն որպես հետագայում լրացված ամբողջական հայտի կրկնություն: Լրացնել սկսելուց առաջ ամբողջությամբ կարդացեք այս հրահանգները, որպեսզի իմանաք թե կոնկրետ ինչ տվյալներ են պահանջվելու առցանց հայտի լրացման ժամանակ:

19. ԵԹԵ ԵՍ ՏԵՍԱՆԵՐԱԾԻՉ (ՍՔԱՆԵՐ) ԶՈՒՆԵՄ, ԿԱՐՈՂ ԵՄ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼ ԱՄՆ-ՈՒՄ ԻՄ ԾԱՆՈԹՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍՁԻ ՆՐԱՆՔ ՏԵՍԱՆԵՐԱԾԵՆ ԴՐԱՆՔ, ԱՊԱ՝ ԱՅԴ \$ԱՅԼԵՐՆ ՈՒՂԱՐԿԵՆ ԻՆՉ:

Այո, դուք կարող եք այդպես վարվել: Կարևորն այն է, որ լուսանկարները համապատասխանեն առաջադրված պահանջներին: Լուսանկարն ու էլեկտրոնային հայտը ներկայացվում են միաժամանակ: Հայտը լրացնելիս լուսանկարներով ֆայլերը պետք է արդեն պատրաստ լինեն, որպեսզի կցվեն հայտին: Լուսանկարներն առանձին ուղարկել չեք կարող: Ամբողջական հայտը լուսանկարների հետ միասին էլեկտրոնային ձևով կարելի է ներկայացնել Միացյալ Նահանգներից կամ ցանկացած այլ երկրից:

20. ԵԹԵ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԻՄ ՀԱՅՏԸ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՐԴՅՈ՞Ք ԿՐԿԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԻՄ ՀԱՅՏԸ:

Այո, կարող եք, սակայն հայտը պետք է ներկայացվի մինչև 2018թ. նոյեմբերի 6-ի կեսօրը՝ արևելյան ստանդարտ ժամանակով: Եթե համակարգը չի ընդունում ձեր հայտը, ապա այն նորից ներկայացնելը հայտի կրկնակի ներկայացման խնդիր չի առաջացնի: Հաշվի առնելով ինտերնետի անկանխատեսելիությունը՝ հայտի չընդունման/մերժման մասին ծանուցումը կարող է հայտնվել ոչ անմիջապես: Հայտը կարող էք ներկայացնել այնքան ժամանակ, քանի դեռ հայտի ստացումը հաստատող ծանուցում չի հայտնվում ձեր էկրանին: Հաստատող ծանուցման ստացումից հետո այլևս լրացուցիչ հայտեր ՉԼԵՐԿԱՅԱՑՆԵՔ:

21. ՀԱՅՏԻ ՍՏԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՑՎԵԼՈՒ Է ՀԵՆՑ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՀԻՆ, ԹԵ՞ ՀԵՏՈ:

Հաստատումը պետք է անմիջապես հայտնվի էկրանին, և այնտեղ պետք է լինի համարանիշ, որն անհրաժեշտ է պահել հետագայում ձեր հայտի շահել/չշահելու կարգավիճակը համակարգում ստուգելու համար: Հաշվի առնելով ինտերնետի անկանխատեսելիությունը՝ հայտի հաստատման մասին ծանուցումը կարող է ուշացմամբ հայտնվել: "Submit" կոճակը կարող էք սեղմել այնքան մինչև հայտն ուղարկվի և էկրանին հայտնվի ստացումը հաստատող ծանուցում: Հաստատման ստացումը նշանակում է, որ ձեր հայտն ամբողջական է, տեղ հասել է և դուք այլևս չպետք է որևէ լրացուցիչ հայտ ներկայացնեք:

22. ԵՍ ՍԵՂՄԵՑԻ SUBMIT (ԼԵՐԿԱՅԱՑՆԵԼ) ԿՈՃԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՉՍՏԱՑԱ: ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿՀԱՄԱՐՎԻ ԱՐԴՅՈ՞Ք ԻՄ ՀԱՅՏԸ, ԵԹԵ ԼՐԱՑՆԵՄ ՈՒ ԼԵՐԿԱՅԱՑՆԵՄ ԵՎՍ ՄԵԿԸ:

Եթե հաստատում չէք ստացել, ուրեմն ձեր հայտը չի գրանցվել և դուք պետք է նոր հայտ ներկայացնեք: Այն չի համարվի կրկնակի հայտ: Եթե ստացել եք հաստատում և հաստատման համար, ապա հայտը վերստին ներկայացնել պետք չէ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

23. ԻՆՉՊԵ՞Մ ԵՄ ԻՄԱՆԱԼՈՒ ՇԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Դուք առցանց գրանցումն հաստատող համարն օգտագործելով 2019թ. մայիսի 7-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը կարող եք www.dvlottery.state.gov կայքում ստուգել ձեր հայտի կարգավիճակը և ստանալ տեղեկություններ: Կարգավիճակի ստուգումը (Entrant Status Check) միակ եղանակն է, որի միջոցով մասնակիցները տեղեկություն են ստանում շահելու վերաբերյալ, ինչպես նաև հրահանգներ հետագա քայլերի ու ներգաղթի վիզայի հարցազրույցի օրվա և ժամի մասին: Որպեսզի առկա բոլոր վիզաները հատկացվեն, ԱՄՆ պետքարտուղարությունը Entrant Status Check-ի միջոցով կարող է 2019թ. մայիսի 7-ից հետո ծանուցել հավելյալ շահումների մասին: Նկատի առնելով ավելի ուշ կատարվող նման թարմացումների հնարավորությունը հաստատման ձեր համարանիշը պահեք մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը: Հիշեք, որ խաղարկային վիզաների www.dvlottery.state.gov կայքն ԱՄՆ պետքարտուղարության կողմից լիազորված միակ պաշտոնական կայքն է, որտեղ պաշտոնապես ներկայացվում են հայտերը, և որտեղ հետագայում ստուգվում են ներկայացված հայտերի կարգավիճակը:

ԱՄՆ պետքարտուղարությունը շահողների հետ կապ չի հաստատի շահման մասին տեղյակ պահելու համար (տես՝ հարց 24):

24. ԵԹԵ ՉԵՄՇԱՀԵԼ, ԻՆՉՊԵ՞Մ ԿԻՄԱՆԱՄ ԱՅՂ ՄԱՍԻՆ: ԿՍՏԱՆԱՄ ԱՐԴՅՈ՞Ք ԵՄ ԾԱՆՈՒՑՈՒՄ:

ԱՄՆ պետքարտուղարությունը չշահելու մասին ուղղակիորեն չի ծանուցում վիճակախաղի մասնակիցներին: Յուրաքանչյուր մասնակից պետք է ստուգի իր կարգավիճակը մուտք գործելով Entrant Status Check հղումով՝

պարզելու շահել է, թե ոչ: DV-2020-ի մասնակցության ձեր հայտի կարգավիճակը դուք կարող եք ստուգել 2019թ. մայիսի 7-ից մինչև առնվազն 2020թ. սեպտեմբերի 30-ը www.dvlottery.state.gov կայքում: Հայտի ստացումն հաստատող համարը պահեք մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը: (Նախորդ տարվա խաղարկության DV-2019-ի արդյունքներն առցանց հասանելի են 2018թ. մայիսի 15-ից մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը):

25. ԻՆՉՊԵՄ ՎԱՐՎԵՄ ԵԹԵ ԿՈՐՑՐԵԼ ԵՄ ՀԱՅՏԻ ՍՏԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱՐԱՆԻՇԸ:

Կարգավիճակի ստուգման համար (Entrant Status Check) անհրաժեշտ է, որ դուք ունենաք հաստատման համարանիշը: Այժմ DV կայքում կարգավիճակի ստուգման ներքո կա նաև հնարավորություն վերականգնել այդ համարանիշը՝ օգտագործելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որը հայտում նշել եք: Դրան գուգահեռ պետք է տրամադրվեն նաև մի շարք անձնական տվյալներ:

ԱՄՆ դեսպանատներն ու հյուպատոսական ծառայությունները կարգավիճակի ստուգման համակարգի հետ առնչություն չունեն և չեն կարող ստուգել Ձեր կարգավիճակը կամ վերականգնել հաստատման համարանիշը (բացի վերը նշված վերականգնման հնարավորությունից): Պետքարտուղարությունը ՉԻ ԿԱՐՈՂ շահողների ցուցակ ապահովել:

26. ՈՒՂԱՐԿՈՒՄԷ ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ:

Պետքարտուղարության կողմից ծանուցող նամակ սովորական փոստով չի ուղարկվում: ԱՄՆ կառավարությունը երբեք էլեկտրոնային փոստով ծանուցում չի ուղարկում շահողներին և DV-2020-ի դեպքում ևս որևէ ծանուցում էլեկտրոնային փոստով չի ուղարկվի: Էլեկտրոնային փոստով շահող մասնակիցներին կուղարկվի միայն հիշեցում հարցազրույցի նշանակման վերաբերյալ, այն բանից հետո երբ կարգավիճակի ստուգմամբ նրանք պարզել են, որ իրենք շահել են ու կատարել են այնտեղ ներկայացված հրահանգները: Էլեկտրոնային փոստով ստացված այդ հաղորդագրությունները շահողներին կհիշեցնեն, որ անհրաժեշտ է այցելել կարգավիճակի ստուգման էջը՝ Entrant Status Check, որտեղ նրանք կգտնեն հարցազրույցի օրվա և ժամի մասին տեղեկությունները: Հարցազրույցի օրն ու ժամն էլեկտրոնային փոստի հաղորդագրության մեջ չեն նշվի: ԱՄՆ պետքարտուղարությունը կարող է էլեկտրոնային փոստով հիշեցում ուղարկել մասնակիցներին, որպեսզի ստուգեն իրենց կարգավիճակը՝ Entrant Status Check, սակայն էլեկտրոնային փոստով ուղարկված ոչ մի նամակ շահել-չշահելու մասին որևէ տեղեկություն չի պարունակի՝

Հարկ է նշել, որ միայն .gov վերջավորություն ունեցող կայքերն են, որ հանդիսանում են ԱՄՆ կառավարության պաշտոնական կայքեր: Բազմաթիվ այլ կայքեր, որոնք կառավարության կայքեր չեն (.com, .org կամ .net) տրամադրում են վիզաների ու ներգաղթի մասին տեղեկություններ ու մատուցում ծառայություններ այդ ոլորտում: Անկախ այդ կայքերի բովանդակությունից՝ պետքարտուղարությունը չի երաշխավորում, չի առաջարկում կամ հովանավորում այդ կայքերում ներկայացված տեղեկություններն ու նյութերը:

Դուք կարող եք էլեկտրոնային նամակներ ստանալ այնպիսի կայքերից, որոնք փորձում են ձեզ դրդել այն բանին, որ որևէ վճարում կատարեք կամ անձնական տվյալներ հաղորդեք: Այդ կայքերը կարող են պահանջել, որ դուք վճարեք որոշ ծառայությունների համար, ինչպիսիք են օրինակ ձևաթղթերի կամ ներգաղթային ընթացակարգերի մասին տեղեկությունների տրամադրումը, որոնք անվճար հասանելի են պետքարտուղարության կայքում, travel.state.gov կամ ԱՄՆ դեսպանության ու հյուպատոսարանի կայքերում: Բացի այդ, ձեզնից կարող են պահանջել վճարումներ որոշ ծառայությունների համար և եթե գումար ուղարկեք, ապա ուղղակի կկորցնեք այդ միջոցները: Նաև զգուշացեք անձնական տվյալներ տրամադրելուց, քանզի ձեր տվյալները կարող են օգտագործվել հանցավոր նպատակներով (ինքնության յուրացում):

Այս խաբուսիկ գրություններն ուղարկողները ձևացնում են, թե կապ ունեն Պետքարտուղարության կամ Քենտուքիի հյուպատոսական կենտրոնի հետ: Հիշեք, մինչ օրս ԱՄՆ կառավարությունը երբեք շահումների մասին էլեկտրոնային փոստով չի տեղեկացրել և չի նախատեսում նման բան անել DV-2020-ի ժամանակ: Նաև հիշեք, որ ԱՄՆ կառավարությունը երբեք չի պահանջի գումար ուղարկել փոստով կամ դրամական փոխանցումների ծառայությունների, օրինակ՝ Վեսթերն Յունիոնի միջոցով:

27. ՔԱՆԻ՞ ՄԱՍՆԱԿԻՑ ԿՇԱՀԻ:

DV-2020-ի ընթացքում խաղարկվում է 50.000 վիզա, սակայն վիճակահանությամբ կընտրվեն ավելի շատ դիմողներ: Քանի որ հավանական է, որ ընտրված առաջին 50.000-ի մեջ կարող են լինել մարդիկ, որոնք որակավորված չեն լինի, կամ էլ ոմանք կարող են ընտրվելուց հետո վիզայի հայտեր չներկայացնել, ուստի ընտրվում է 50.000 հոգուց ավել մարդ՝ ապահովելու բոլոր 50.000 վիզաների տրամադրումը: Մա նաև նշանակում է, որ վիճակախաղում շահած ոչ բոլոր մարդիկ են, որ կստանան վիզա:

Շահած մասնակիցները Entrant Status Check բաժնում կարգավիճակը ստուգելով կիմանան իրենց հերթական համարը ցուցակում, իսկ վիզայի հարցազրույցները, այն շահողների համար, ովքեր կներկայացնեն ըստ հրահանգների պահանջվող բոլոր տեղեկություններն ու նախքան հարցազրույցը պահանջվող թղթաբանությունը, կսկսվեն 2019թ. հոկտեմբերից: Հրահանգների համաձայն պահանջվող տեղեկատվությունն ապահոված շահող մասնակիցներն իրենց հարցազրույցի օրվա մասին կտեղեկանան պաշտոնական կայքում հայտի կարգավիճակը ստուգելու միջոցով: Հարցազրույցի մասին տեղեկատվությունը նրանց հասանելի կլինի հարցազրույցից 4-6 շաբաթ առաջ:

Ամեն ամիս վիզաներ կթողարկվեն այն անձանց համար, ովքեր արդեն պատրաստ են հարցազրույցներին: Երբ արդեն 50.000 վիզաներն էլ տրամադրված լինեն, տարվա ծրագիրը կավարտվի: Հնարավոր է, որ վիզաները սպառվեն նախքան 2020թ. սեպտեմբերը: Վիճակախաղում շահած մասնակիցները, որոնք ուզում են վիզա ստանալ, պետք է արագ գործեն: **Վիճակախաղում շահելը չի նշանակում, որ վիզայի ստացումը երաշխավորված է: Պետք է բավարարել նաև վիզայի ստացման համար առաջադրվող պահանջներին: Ներգաղթի վիզաներ կտրվեն վիզայի տրամադրման պահանջներին բավարարող առաջին 50.000 հոգուն:**

28. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԸՆՏՐՎՈՒՄ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՇԱՀՈՂՆԵՐԸ:

Շահելու մասին պաշտոնապես տեղեկանալու համար անհրաժեշտ է ստուգել հայտի կարգավիճակը www.dvlottery.state.gov էջի Entrant Status Check բաժնում՝ սկսած 2019թ. մայիսի 7-ից մինչև առնվազն 2020թ. սեպտեմբերի 30-ը: Պետքարտուղարությունը շահողներին սովորական փոստով կամ էլեկտրոնային փոստով ծանուցում կամ նամակ չի ուղարկում: Եթե սովորական փոստով կամ էլեկտրոնային փոստով ծանուցում եք ստանում վիճակախաղում շահելու վերաբերյալ, ապա իմացեք, որ դա ԱՄՆ պետքարտուղարությունից չէ և չունի օրինական ուժ: Պետքարտուղարությունից ստացվող էլեկտրոնային փոստով գրությունները Ձեզ կհրահանգեն կարգավիճակը ստուգել Entrant Status Check բաժնում: Պետքարտուղարությունը երբեք ձեզնից չի պահանջի գումար ուղարկել փոստով կամ դրամական փոխանցումների համակարգերի, օրինակ Վեսթերն Ցոունիոնի միջոցով:

Բոլոր տարածաշրջաններից ստացվող հայտերը համարակալվում են և գրանցման ավարտից հետո համակարգիչը պատահական ընտրանքով կորոշի վիճակահանության շահողներին: Ընտրվածներն ըստ տարածաշրջանների կգրանցվեն ընտրության հերթականության համաձայն: Գրանցման ժամանակահատվածում ներկայացված բոլոր հայտերի ընտրության հնարավորությունները նույնն են: Շահող մասնակիցներն իրենց շահման մասին կկարողանան տեղեկանալ 2019թ. մայիսի 7-ից սկսած՝ այցելելով www.dvlottery.state.gov կայք և ստուգելով իրենց հայտի կարգավիճակը: Պետքարտուղարության Քենտուքիի հյուպատոսական կենտրոնը կշարունակի զբաղվել այդ հարցերով մինչև բոլոր ընտրվածներին տեղյակ պահի, որ նրանք վիզայի համար ներկայանան ԱՄՆ հյուպատոսական ծառայություններ իրենց բնակության երկրում, իսկ ԱՄՆ-ում գտնվողները դիմեն ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայություններին իրենց կարգավիճակը փոխելու նպատակով:

29. ԱՄՆ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԱՀՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՄՆ ՆԵՐԳԱՂԹԻ ՈՒ ՀՊԱՏԱԿԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՓՈՒՅԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

Այո, ֆիզիկապես ԱՄՆ-ում գտնվող անձինք կարող են դիմել ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման

ծառայություններին մշտական բնակչի կարգավիճակ ստանալու նպատակով, եթե նրանք Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 245 կետով իրավասու են փոխել իրենց կարգավիճակը: Մասնակիցները պետք է իմանան, որ ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայությունների հետ իրենց գործերը, այդ թվում կապված իրենց կնոջ/ամուսնու և 21 տարին չըրացած երեխաների հետ, պետք է ավարտեն մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը, քանի որ այդ ժամկետից հետո DV-2020-ի արդյունքները չեղյալ են համարվում: 2020թ. սեպտեմբերի 30-ին կեսգիշերից հետո ոչ մի վիզա այս ծրագրի շրջանակներում չի տրամադրվի:

30. ՇԱՀՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԻՆՉՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՆԵՆ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

DV-2020 ծրագրի վիճակահանությամբ շահած մարդիկ վիզա ստանալու համար կարող են դիմել 2020 ֆինանսական տարվա ընթացքում, այսինքն՝ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը: Դիմողներին խորհուրդ է տրվում իրենց վիզաների համարներն ընթացիկ դառնալու պահից սկսած հնարավորինս արագ դիմեն վիզա ստանալու համար:

Բոլոր շահող մասնակիցները, առանց բացառության, պետք է մինչև ֆինանսական տարվա ավարտը, այսինքն՝ 2020թ. սեպտեմբերի 30-ը հասցնեն ստանալ վիզա, կամ էլ փոխեն իրենց կարգավիճակը: Եթե այդ ժամկետում շահող մասնակիցները չեն ստանում վիզա, ապա շահումը համարվում է ուժը կորցրած: Նաև ընտանիքի անդամները (ամուսին/կին և երեխաներ), որոնք իրավասու են ստանալ վիզաներ DV-2020-ով պետք է հասցնեն վիզաներ ստանալ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Այն մասնակիցները, որոնք դիմում են ԱՄՆ-ից դուրս, կայքում հայտի կարգավիճակի ստուգման միջոցով կստանան ծանուցում իրենց հարցազրույցի օրվա վերաբերյալ՝ դրանից 4-6 շաբաթ առաջ:

31. ԵԹԵ ՇԱՀՈՂ ՄԱՍՆԱԿԻՑԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է, ԻՆՉ ԸՆԹԱՑՔ Է ՍՏԱՆՈՒՄ ԱՅԴ ԳՈՐԾԸ:

Շահող մասնակցի մահը նախքան Միացյալ Նահանգներ մեկնելը և ներգաղթողի կարգավիճակ ստանալը նշանակում է, որ այդ գործը փակվում է և նրա հայտում ներառված կինը/ամուսինը և/կամ երեխաներն իրավասու չեն ստանալ ներգաղթի վիզա, ինչպես նաև չեղյալ կհամարվեն արդեն տրամադրված վիզաները:

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ

32. ԻՆՉ ԱՐԺԵ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱԿԱԽԱՂՈՒՆ:

Էլեկտրոնային վիճակախաղին մասնակցությունն անվճար է: Սակայն եթե շահում եք վիճակախաղում և ներգաղթային վիզայի դիմում եք ներկայացնում և հարցազրույցի եք գնում, ապա այդ ժամանակ դեսպանատան կամ հյուպատոսարանի գանձապահին ուղղակիորեն վճարում եք ներգաղթային վիզայի համար սահմանված միջնորդավճարները: Այն շահող մասնակիցները, ովքեր կարգավիճակի փոփոխում են ձևակերպելու հենց Միացյալ Նահանգների տարածքում, այդ գումարը կարող են ուղղակիորեն վճարել Ներգաղթի և հպատակագրման ծառայության գրասենյակներում: Վճարումների մասին մանրամասներ շահող մասնակիցներին կներկայացվեն www.dvlottery.state.gov կայքից տրամադրվող հրահանգներում:

33. ԻՆՉՊԵՐՄ ԵՎ ՈՐՏԵՐՂ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԵՄ ԽԱՂԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻԶԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ԵԹԵ ՇԱՀԵԼ ԵՄ ՎԻՃԱԿԱԽԱՂՈՒՄ:

Վիճակախաղում շահելուց հետո www.dvlottery.state.gov կայքում Entrant Status Check բաժինն այցելելիս ձեզ կտրվեն հրահանգներ: Ներգաղթի վիզայի հետ կապված բոլոր վճարումները դուք կկատարեք դեսպանատանը կամ հյուպատոսարանում՝ անձամբ: Հյուպատոսական գանձապահը կտա վճարումը կատարելու վերաբերյալ ԱՄՆ կառավարության ստացական: ԱՄՆ դեսպանատուն կամ հյուպատոսարան ներգաղթային վիզայի

դիմելու դեպքում ոչ մի պարագայում վճարումներ չկատարեք փոստով, Վեսթերն Յունիոն կամ այլ վճարային համակարգերով:

Եթե շահել եք վիճակախաղում, գտնվում եք ԱՄՆ-ում և կարգավիճակի փոփոխություն եք ձևակերպում Ներգաղթի և հպատակագրման ծառայության գրասենյակներում, ապա www.dvlottery.state.gov կայքում Entrant Status Check բաժնում ձեզ կտրվեն վճարումը կատարելու անհրաժեշտ հրահանգներ:

34. ԵԹԵ ՇԱՀՈՒՄ ԵՄ ՎԻՃԱԿԱԽԱՂՈՒՄ, ԱՊԱ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻՉԱՅԻ ԴԻՄՈՒՄ ԵՄ ՆԵՐԿԱՅՑՆՈՒՄ ԵՎ ՄԵՐԺՎՈՒՄ, ԵՏ ՎԵՐԱԴԱՐՉՎՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈ՞Ք ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻՉԱՅԻ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ:

Ոչ, վիզայի համար կատարված վճարումները վերադարձման ենթակա չեն: Վիզայի դիմում ներկայացնողները պետք է հրահանգներում ներկայացվող բոլոր պահանջները բավարարեն: Եթե հյուպատոսական պաշտոնյան որոշում է, որ դիմողը վիզայի ստացման պահանջներին չի համապատասխանում կամ ԱՄՆ օրենսդրությունից բխող որևէ այլ պատճառով իրավասու չէ ստանալ ներգաղթային վիզա և նրան վիզայի տրամադրումը մերժվում է, իսկ կատարած վճարումները ետ չեն վերադարձվում:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՒՄ

35. ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԻՉԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՉԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵ՞Ն ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՇՐՋԱՆՑԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅՑՆԵԼ:

Ծրագրի շահող մասնակիցները պետք է համապատասխանեն Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքով սահմանված ներգաղթի պայմաններին: Բացառություններ կարող են լինել միայն այն դեպքերում, որոնք սահմանված են օրենքով: Բացառությունների որոշ ընդհանուր դրույթներ գործում են ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ մշտական բնակչի կարգավիճակ ունեցող մոտ ազգականներ ունեցողների համար, սակայն, հաշվի առնելով այս ծրագրի ժամանակային սահմանափակումները, շահողները դժվար թե կարողանան օգտվել այդ պայմաններից:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

36. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՅՏՆԵԼ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ ՍՍԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինտերնետային կեղծիքների մասին Ձեր բողոքը հայտնելու համար կարող եք այցելել Առևտրի դաշնային հանձնաժողովի վարած www.econsumer.gov կայքը, որը 17 պետությունների սպառողների շահերի պաշտպանության գերատեսչությունների համատեղ կայքն է կամ այցելեք Հետաքննությունների դաշնային բյուրոյի ինտերնետային հանցանքների հաղորդումների կենտրոնի Internet Crime Complaint Center էջը: Էլեկտրոնային փոստով ստացվող նամակների մասին հաղորդելու համար օգտվեք www.econsumer.gov-ի Telemarketing and Spam գործիքից կամ լրացուցիչ տեղեկությունների և տվյալների համար այցելեք Արդարադատության դեպարտամենտի կայքի Unsolicited Commercial Email (“Spam”) էջը :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՐԿԱՅԻՆ ՎԻՉԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

37. ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ՔԱՆԻ՞ ՎԻՉԱ Է ԽԱՂԱՐԿՎԵԼՈՒ DV-2020-Ի ԺԱՄԱՆԱԿ:

Ըստ օրենքի այս ծրագրով ամեն տարի խաղարկվում է առավելագույնը 55.000 մշտական բնակության վիզա: Մակայն 1997թ. նոյեմբերին Կոնգրեսի ընդունած Նիկարագուական ճշգրտման և Կենտրոնական Ամերիկայի օգնության (NACARA) օրենքով որոշվեց, որ 1999թ. սկսած այդ 55.000 վիզաներից 5.000-ն օգտագործվելու են NACARA ծրագրի համար: Արդեն 2000թ.-ից խաղարկվող վիզաների փաստացի թիվը պակասեցվեց 5.000-ով ու դա կպահպանվի նաև DV- 2020 խաղարկության ժամանակ:

ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

38. ԵԹԵ ԵՍ ՍՏԱՆՈՒՄ ԵՄ ՎԻՉԱ ԱՅՍ ԾՐԱԳՐՈՎ, ԱՊԱ ԿՀՈԳԱ ԱՐԴՅՈ՞Ք ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ, ԿՕԳՆԻԱՐԴՅՈ՞Ք ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ, ԿԱՊԱՀՈՎԻ ԱՐԴՅՈ՞Ք ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՅԼ ՍՈՒԲՄԻԴԻԱՆԵՐ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՎԵՍ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ոչ, այս ծրագրով վիզա ստացողներին որևէ աջակցություն, ինչպիսին կարող է լինել ճանապարհածախսը հոգալը, բնակարանով ապահովելը, սուբսիդիաներ տրամադրելը, չի նախատեսվում: Եթե շահել եք վիճակախաղում և ներգաղթի վիզայի դիմում եք ներկայացնում, ապա պետք է կարողանաք հավաստիացնել, որ դուք պետության ուսերին բեռ չեք դառնալու, այսինքն՝ կարողանալու եք ինքներդ հոգալ Ձեր կենսապահովման՝ սննդի, բնակարանի ու մյուս ծախսերը: Որպես ապացույց կարող եք ներկայացնել Ձեր ունեցած միջոցները, ԱՄՆ-ում բնակվող ազգականի կամ բարեկամի կողմից Ձեզ աջակցելու մասին պարտավորագիր (*Affidavit of Support*, Ձև I-134) կամ ամերիկյան գործատուից ստացված աշխատանքային առաջարկ և այլն:

ԵՐԿՐՆԵՐ, ՈՐՈՆՑ ԲՆԻԿՆԵՐՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ DV-2020 ԾՐԱԳՐԻՆ

Ստորև ըստ մայրցամաքների ներկայացվում են այն երկրները, որոնց բնակիչներն ԻՐԱՎԱՍՈՒ են մասնակցել DV-2020 ծրագրին: Այն երկրները, որոնց բնակիչները չեն կարող մասնակցել DV-2020 ծրագրին, որոշվել են ԱՄՆ քաղաքացիության և ներգաղթի ծառայությունների կողմից ըստ Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 203(գ) կետի: Հպատակ տարածքները ներառված են կառավարող երկրի տարածաշրջանի մեջ: Այն երկրները, որոնց բնիկները չեն կարող մասնակցել այս ծրագրին, քանի որ ունեն ներգաղթի բարձր ցուցանիշներ, նշվում են յուրաքանչյուր տարածաշրջանի ցուցակի վերջում:

ԱՖՐԻԿԱ

Անգոլա	Լիբերիա	Չադ
Ալժիր	Լիբիա	Ջիբութի
Բենին	Կամերուն	Ռուանդա
Բոթսվանա	Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն	Սաո Թոմե և Պրինսիպի
Բուրկինա Ֆասո	Կոմորոս	Սենեգալ
Բուրունդի	Կոնգո	Սեյշելներ
Գաբոն	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	Սիերա Լեոնե
Գամբիա	Հասարակածային Գվինեա	Սոմալի
Գանա	Հարավաֆրիկյան Հանրապետություն	Սուդան
Գվինեա	Հարավային Սուդան	Սվազիլենդ
Գվինեա-Բիսաու	Մադագասկար	Տոգո
Եգիպտոս*	Մալավի	Ուգանդա
Եթովպիա	Մալի	Փղոսկրի ափ/Կոտ դ'Իվուար
Զամբիա	Մավրիտանիա	Քեյփ Վերդե
Զիմբաբվե	Մավրիտիուս	Քենիա
Էրիթրեա	Մարոկո	
Թանզանիա	Մոզամբիկ	
Թունիս	Նամիբիա	
Լեսոթո	Նիգեր	

* Մինչև 1967թ. հունիսն իսրայելի, Հորդանանի, Սիրիայի և Եգիպտոսի կողմից վերահսկվող տարածքներում ծնված մարդիկ համապատասխանաբար դիտարկվում են որպես Իսրայելում, Հորդանանում, Սիրիայում և Եգիպտոսում ծնվածներ: Գազայի հատվածում ծնված մարդիկ դիտարկվում են որպես Եգիպտոսում ծնվածներ, Վեստ Բենքում ծնվածները որպես Հորդանանում ծնվածներ և Գոլան Հեյթում ծնվածները որպես Սիրիայում ծնվածներ:

Աֆրիկյան մայրցամաքից այս տարվա ծրագրին մասնակցելու իրավասություն չունեն Նիգերիայի բնիկները:

ԱՄԻՍ

Աֆղանստան	Իրան	Սալազիա
Բահրեյն	Իրաք	Մալդիվներ
Բհուտան	Իսրայել*	Միացյալ Արաբական Էմիրություններ
Բրունեյ	Լատս	Մոնղոլիա
Բիրմա	Լիբանան	Նեպալ
Եմեն	Կատար	Շրի Լանկա
Թայլանդ	Կամբոջա	Սաուդյան Արաբիա
Թայվան**	Հյուսիսային Կորեա	Սինգապուր
Թիմոր-Լեսթ	Հորդանան*	Սիրիա*
Ինդոնեզիա	Հոնկոնգի հատուկ վարչական շրջան	Քուվեյթ
	Ճապոնիա***	Օման

* Մինչև 1967թ. հունիսն իսրայելի, Հորդանանի և Սիրիայի կողմից վերահսկվող տարածքներում ծնված մարդիկ համապատասխանաբար դիտարկվում են որպես Իսրայելում, Հորդանանում և Սիրիայում ծնվածներ: Գազայի հատվածում ծնված մարդիկ դիտարկվում են որպես Եգիպտոսում ծնվածներ, Վեստ Բենքում ծնվածները որպես Հորդանանում ծնվածներ և Գոլան շրջանում ծնվածները որպես Սիրիայում ծնվածներ:

** Հոնկոնգ հատուկ վարչական շրջանի (Ասիա), Թայվանի (Ասիա) Մակաու հատուկ վարչական շրջանի (Եվրոպա) բնիկները կարող են մասնակցել ու այս տարածքները ներկայացված են ցուցակում: Վիզայի վիճակախաղի նպատակներով Մակաու հատուկ վարչական շրջանում ծնվածները որպես իրենց երկիր կնշեն Պորտուգալիան:

*** Համոքայ կղզիներում, Շիկոտանում, Կունաշիրիում և Էթորոֆոում ծնված մարդիկ դիտարկվում են որպես Ճապոնիայում ծնվածներ, իսկ Հյուսիսային Մալալինում ծնվածները համարվում են Ռուսաստանում ծնվածներ:

Հետևյալ ասիական երկրների բնիկները չեն կարող մասնակցել այս տարվա ծրագրին. Բանգլադեշ, Հարավային Կորեա, Հնդկաստան, Չինաստան (մայրցամաքային), Պակիստան, Վիետնամ և Ֆիլիպիններ:

ԵՎՐՈՊԱ

Ադրբեջան	Լիխտենշտեյն	Նիդեռլանդներ (հպատակ տարածքները ներառյալ)
Ալբանիա	Լիտվա	Շվեդիա
Անդորրա	Լյուքսեմբուրգ	Շվեյցարիա
Ավստրիա	Խորվաթիա	Չեխիայի Հանրապետություն
Բելգիա	Կիպրոս	Պորտուգալիա (հպատակ տարածքները ներառյալ)
Բելառուս	Կոսովո	Ռումինիա
Բոսնիա և Հերցեգովինա	Հայաստան	Ռուսաստան****
Բուլղարիա	Հյուսիսային Իռլանդիա***	Սան Մարինո
Գերմանիա	Հունաստան	Սերբիա
Դանիա (հպատակ տարածքները ներառյալ)	Հունգարիա	Սլովակիա
Էստոնիա	Ղազախստան	Սլովենիա
Թուրքիա	Ղրղզստան	Վատիկան
Թուրքմենստան	Մալթա	Վրաստան
Իռլանդիա	Մակաու հատուկ վարչական շրջան**	Տաջիկստան
Իսլանդիա	Մակեդոնիա, նախկին	Ուզբեկստան
Իսպանիա	Մոլդովա	Ուկրաինա
Իտալիա	Մոնակո	Ֆինլանդիա
Լատվիա	Մոնտենեգրո	Ֆրանսիա (հպատակ տարածքները ներառյալ)
Լեհաստան	Նորվեգիա	

** Մակաու հատուկ վարչական շրջանն **իրավասու է մասնակցել** և ներառված է Մակաու հատուկ վարչական շրջանում (Եվրոպա) ծնվածները ծնվածները որպես իրենց երկիր կնշեն Պորտուգալիան:

*** Միայն այս ծրագրի նպատակներով Հյուսիսային Իռլանդիան դիտարկվում է առանձին: Հյուսիսային Իռլանդիայի բնիկները **կարող են մասնակցել** ծրագրին և այն ներառված է տարածաշրջանի ցուցակում:

**** Համոքայ կղզիներում, Շիկոտանում, Կունաշիրիում և Էթորոֆոում ծնված մարդիկ դիտարկվում են որպես Ճապոնիայում ծնվածներ, իսկ Հյուսիսային Մախալինում ծնվածները համարվում են Ռուսաստանում ծնվածներ:

Հետևյալ եվրոպական երկրների բնիկները **չեն կարող** մասնակցել այս տարվա ծրագրին. Մեծ Բրիտանիա: Մեծ Բրիտանիան (Միացյալ Թագավորությունը) ներառում է նաև հետևյալ հպատակ տարածքները. Անգուիլա, Բերմուդա, Բրիտանական Վիրջինյան կղզիներ, Կայմանյան կղզիներ, Ֆոլկլենդյան կղզիներ, Ջիբրալթար, Մոնսերատ, Պիտկարին, Սենտ Հելենա, Տյորքս և Կայքոսյան կղզիներ:

ՀՅՈՒՄԻԱՍՅՖԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Բահամներ

Հյուսիսային Ամերիկայից Կանադայի ու Մեքսիկայի բնիկները **չեն կարող** մասնակցել այս տարվա ծրագրին:

ՕՎԿԻԱՆԻԱ

Ավստրալիա (հպատակ տարածքները ներառյալ)
Կիրիբատի
Մարշալյան կղզիներ
Միկրոնեզիայի Ֆեդերալ Նահանգներ
Նաուրու

Նոր Զելանդիա (հպատակ տարածքները ներառյալ)
Պալաու
Պապուա Նոր Գվինեա
Մամոա
Սողոմոնյան կղզիներ

Վանուատու
Տոնգա
Տուվալու
Ֆիջի

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ԿԱՐԻԲՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

Անտիգուա և Բարբուդա
Արգենտինա
Բարբադոս
Բելիզ
Բոլիվիա
Գրենադա
Գվատեմալա
Գվիյանա

Դոմինիկա
Էկվադոր
Կոստա Ռիկա
Կուբա
Հոնդուրաս
Նիկարագուա
Չիլի
Պանամա

Պարագվայ
Սենտ Բիթս և Նևիս
Սենտ Լուսիա
Սենտ Վինսենթ և Գրենադիններ
Սուրինամ
Վենեսուելա
Տրինիդադ և Տոբագո
Ուրուգվայ

Այս տարածաշրջանից այս տարվա ծրագրին մասնակցել **չեն կարող** հետևյալ երկրների բնիկները. Բրազիլիա, Դոմինիկյան Հանրապետություն, Էլ Սալվադոր, Կոլումբիա, Հայիթի, Մեքսիկա, Պերու և Յամայկա: